

H.S. GHAJOYAN

BASES OF METAPHORIZATION IN ENGLISH TERMS ON COMPUTER SCIENCE

The units that have become terms as a result of metaphorization in the field of computer science are analyzed. Metaphorization plays an important role in the process of term formation. To denote a scientific concept, the process of metaphorization begins with the choice of a usual word in the language. New developments are constantly being recorded in the mentioned field. In this case, it is necessary to study the terms formed on the basis of metaphorization.

Keywords: metaphorization, term, scientific language, concept, source area, target area.

ՀՏԴ 82'282:811.19=161.1=111

Հ.Ձ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԲԱՄԲԱՍԱՆՔ, ՉԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ՇԱՂԱԿՐԱՏԱՆՔ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Դիտարկվում և զուգադրվում են հայերենի, ռուսերենի և անգլերենի *բամբասանք*, *չարախոսություն*, *շաղակրատանք* արտահայտող դարձվածքների իմաստային, կառուցվածքային, քերականական, ոճական առանձնահատկությունները: Բացահայտվում են նշված միավորների առանձնահատկությունները, ընդհանրություններն ու տարբերությունները, որոնք նպաստում են դիտարկվող լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների և տարբերությունների բացահայտմանը:

Առանցքային բառեր. դարձվածք, իմաստ, առանձնահատկություն, ընդհանրություն, տարբերություն, լեզվամտածողություն, հոմանիշ, հականիշ, համարժեք:

Բարին և չարը՝ բարոյագիտության հիմնական տարակարգերը, բնորոշում են առանձին մարդկանց, մարդկանց խմբերի և պատմական խոշոր իրադարձությունների բարոյական գնահատականները և կազմում են բարոյականի և անբարոյականի բովանդակությունը: Բարին այն է, ինչը հասարակությունը համարում է բարոյական, պատշաճ, արժանի ընդօրինակման: Չարը հասարակական զարգացմանը հակադիր բացասական արարքներն ու երևույթներն են, որոնք չի ընդունում հասարակությունը՝ համարում է անբարոյական և դատապարտում (1): Բարությունը ներառում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են բարյացակամությունը, մեծահոգությունը, գթասրտությունը, կարեկցանքը, չարությունը, ընդհակառակը, դաժանությունն ու անգթությունը: Նշված դրական կամ բացասական զգացումները հուզում, ալեկոծում են մարդու միտքն ու հոգին, հիմք հանդիսանալով լեզվական վերացարկումների համար, ինչն էլ իր հերթին դառնում է դարձվածքների առաջացման աղբյուր:

Դարձվածքները, որ հիմնականում ժողովրդական մտածողության արդյունք, նախ առաջանում են խոսակցական լեզվում, ապա նոր անցնում գրականին: Դրանց առաջացումը կապված է լեզվամտածողության զարգացման ավելի բարձր մակարդակի հետ, երբ ժողովուրդն իր դարավոր փորձի ու դիտարկումների հիման վրա վերացարկումներ է կատարում և վերափմաստավորում բառերը իր խոսքն ու միտքն ավելի դիպուկ, արտահայտիչ ու տպավորիչ դարձնելու համար [2]:

Դիտարկվում են հայերենի, ռուսերենի և անգլերենի «բամբասանք, չարախոսություն, շաղակրատանք» արտահայտող դարձվածքների իմաստային, կառուցվածքային, քերականական, ոճական առանձնահատկությունները բացահայտվում են դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:

Բամբասանքը, որպես մեկի նկատմամբ անբարյացակամ կամ վարկաբեկող տեղեկություն, տարածվում է անստույգ, ոչ ճիշտ ու մտացածին լուրերի հիման վրա՝ պարունակելով չարախոսություն ու զազրախոսություն, ինչպես նաև վատաբանում, ամբարտավանություն, անհիմն մեղադրանք ու զրպարտություն, հայիոյանք, նենգախոսություն ու բանսարկություն: Նշված իմաստներն ու իմաստային նրբերանգներն արտահայտող դարձվածային միավորներ առկա են դիտարկվող լեզուներում, սակայն հայերենի դաշտը թերևս ամենաձավալունն ու ամենահարուստն է թե՛ իմաստային նրբիմաստներով, թե՛ կառուցվածքային, քերականական և ոճական առանձնահատկություններով: Բերենք բամբասանք, չարախոսություն արտահայտող մի քանի դարձվածք նշված լեզուներում: Նշենք, որ բազմիմաստ դարձվածքների դեպքում դիտարկվել են միայն այս դաշտին վերաբերող իմաստները:

Անոսկոր լեզու - Բամբասող, շաղակրատ, վայրիվերո խոսող: *Անոսկոր լեզուները շատ բան կասեն: Հեյոո՞ (ՁՀ, 391):*

Միսը ծամել - Բամբասել: *Միս ծամող քաղաքի աղաթներին լավ ծանոթ զգույշ ճողոն երբեք թույլ չէր տալիս, որ իր տանը որևէ երիտասարդ մի աղջկա հետ առանձին մնա (ՀԼԴԲ, 434):*

Ատամի տակ ընկնել - Բամբասանքի, ծաղրի, չարանենգ քննադատության առարկա դառնալ: *Իր թեթևտոլիկ բնավորության պատճառով արդեն բոլորի ապամի տակ էր ընկել (ՀԼԴԲ, 80):*

Ատամները քորել (բրբ.) - Հիմար-հիմար դուրս տալ, բամբասել: *Անգործ նստած՝ ապամներն են քորում, սրան-նրան վարկաբեկում (ՀԼԴԲ, 82):*

Մատի փաթաթան դառնալ/լինել - Մշտական խոսակցության, բամբասանքի առարկա լինել/դառնալ: *Գոմապահի և պահակի զրպարտությունը դարձել են մատի փաթաթան և ամեն քայլափոխին երեսովն են տալիս (ՁՀ, 177):*

Միսը կրծել - Բամբասել: *Ինչպե՞ս մարդ ներվային չդառնա, երբ չորս կողմից վրա թափված՝ ամբողջ օրը միսդ կրծում են* (ՀԼԴԲ, 434):

Աչքում գգել (մեկի) - Մեկին բամբասելով, ամբաստանելով, վատաբանելով ուրիշների մոտ վարկաբեկել: *Քեզ Միհրներսեհի աչքում գգելով՝ նա չի հանգստանա* (ԴՎ, 297):

Ոտքը բռնել (բրբ.), ոտը կրծել - Բամբասել, չարախոսել: *Վրաս հաչողների թիվը քիչ էր, դու էլ ոչ ոք բռնեցիր* (ՀԼԴԲ, 473): *Քիչ մարդիկ կա՞ն, որ էսօր իմ հոր հացն են ուտում ու հիմա նրա ոտը կրծում են* (ՊՀ, 426):

Գլխին կեղտաջուր լցնել - Մեկին զրպարտել, խայտառակել, բամբասել: *Կինն անընդհատ կեղտաջուր էր թափում նրա գլխին, այդ պատճառով էլ ընկա-նիքի անդորրը խաթարվում էր:*

Բերանը պատռել - Սանձարձակ, մեծ-մեծ խոսել: *- Ո՞ւմ շներն եք,- գոռում է բիձան,- սոված շներ, ո՞վ ա ձեզ իրավունք տվել իմ վրեն բերան պատռելու* (ԴՊ, 110):

Բերանը ընկնել - Մեկի խոսակցության կամ բամբասանքի առարկան դառնալ: *Հարկավ բան մը կա, որ ամենուն բերանը ինկեր եք... դուն այդ կնոջ բարիք մը ընել կուզի՞ս* (ՕԵ, 500):

Ծակ բերան - Բացբերան, բամբասասեր անձ: *Թաք ըտենց ըլի, խեղճ ա էն աղջիկը, ծակ բերանը նրա վրա խոսաց* (ՊՀ, 216):

Լեզվից թույն կաթել - Չար, խայթող լեզու ունենալ: *Ես չգիտեի, որ նա այդպիսին է. լեզվից թույն է կաթում:*

Բերանը շաղ տալ, բերանը ցրիվ տալ, լեզուն շաղ տալ - Հայիոյել, անպարկեշտ խոսքեր ասել, վայրիվերո խոսել: *Արուսը նրա վրա գոռաց, դուրս վռնդեց և ասավ, որ այլևս իր տունը ուր չկոխի ու բերանը շաղ չտա իր մարդու վրա* (ԶՀ, 231): *Ասում եմ, բերանդ շաղ ցրիվ մի տա,- կանչեց պամոշնիկը* (ԲԵ, 526):

Ծուռ բերան բանալ - Մեկին վատաբանել, չարախոսել: *Նրա մասին ծուռ բերան են բացում, շատերը լավ չեն արտահայտվում* (ՀԼԴԲ, 308):

Չար լեզու - Չար, խայթող լեզու: *Գիտեմ, գիտեմ ինչ չար է քո լեզուն* (ՇԵ, 277):

Բերանից դուրս տալ/թափվել/վեր ածել/վեր թափել - Վայրիվերո խոսել, բերանի եկածն ասել: *Տարին տասներկու ամիս անեծքներ էին միայն, որ թափվում էին նրա բերանից* (ՆՊ, 70):

Բերանի ծամոն/ծամոց/մաստակ դառնալ/լինել - Բոլորի բամբասանքի առարկան դառնալ: *-Քիչ մը առաջ լսի պատճառը, պարապ տեղը ավոր-անոր բերնին ծամոց կըլլանք կոր* (ՕԵ, 196):

Բերանի ծամոն/ծամոց/մաստակ անել՝ դարձնել/շինել - Բոլորի խոսակցության բամբասանքի առարկան դարձնել: *Բաս ուզում ես էս քաղաքի մեջ, խալխի բերանի մեջ բերանի ծամոն շինի, վայ քո օրին, Մարիամ կնիկ* (ՇԵ, 23-6):

Լեզուն մաքուր չպահել - Բամբասել, հայիոյել: *Մենք մեր լեզուն մաքուր չենք պահում, մենք բամբասում ենք, մենք զրպարտում ենք* (ՇԵ, 423):

Բերանի կապը կտրել/քանդվել - Խոսելու չափը չհմանալ, զագրախոսել, հայիոյել: *-Ի՞նչ ես էլի բերնիդ կապը կտրել:*

Թունավոր լեզու - Չարախոս մարդ, խայթող լեզու: *Նա թունավոր լեզու ունի: Չգուշացիր նրանից:*

Լեզուն չար - Չարությանը խոսող, չկամ: *-Նա գիտե, որ իմ սիրտը բարի է, լեզուս է միայն չար* (ՇԵ, 284):

Չար լեզուները ասում են - Չարախոսների ասելով: *- Ի՞նչ կանեիք չար լեզուների դեմ, ով գիտե, այս քաղաքից կփախչեիք, այնքան խոսք կլսեիք* (ՇԵ, 72):

Չար լեզու(ներ) - Բամբասող(ներ), զրպարտիչ(ներ): *Կլուբ չգնալի չար լեզուներին հազար ու մի բամբասանքի նյութ է տալիս* (ՇԵ, 306):

Լեզվի կապերը արծակել/բաց թողնել - Սանձարձակ, անկաշկանդ կերպով արտահայտվել: *Լեզվի կապերը բաց էր թողել, չէր նկատել, որ սենյակում կանայք կան* (ՀԼԴԲ, 262):

Ականջը լցնել - Մեկի մասին գաղտնաբար աննպաստ բաներ ասել: *Բացի այդ, ճանապարհին պիտի լցնես Խոսրովի ականջը* (ԴՎ, 181):

Ականջին փսփսալ - Մեկին զրպարտել, չարախոսել: *Երևում է, որ մեր մասին փնտրենի ականջին փսփսացել են:*

Ճակատը/տին մուր քսել - Անպատվել, զրպարտել, բանսարկել: *Աղջիկ ջան, տես, հա՛, ճակատներին մուր չքես, չխայտառակես մեզ:*

Անունը բերանում մի մատ մեղր դառնալ - Խոսակցության ծաղրուծանակի, բամբասանքի առարկա դառնալ: *Այսպես թե այնպես, նրա անունը քաղաքի բերանում մի մատ մեղր է դառել, արդեն բամբասանքները սկսվել են:*

Գլխին գործ փաթաթել - Մեկին զրպարտությանը ամբաստանել: *Դուք ուզում եք իմ գլխին գործ փաթաթել: Եվ ամբողջը այդ սրիկայի պատճառով, որը վաղուց արդեն էլեկտրական աթոռին պիտի նստած լիներ* (ՀԼԴԲ, 194):

Լեզվատեղ լինել (բրբ.), լեզվի տակ ընկնել - Բամբասանքի առարկա դառնալ: *Էնպես նստես կանգնես, դուշմնին լեզվատեղ չեղիս* (ՀԼԴԲ, 262): *Վաղ նրան, ով կընկներ նրա կծու լեզվի տուր ատամի տակ* (ԹԱ, 155):

Շան ատամ ունենալ (գռիկ., անարգ.) - Մարդկանց վիրավորող, բամբասող: *Առանց սրան-նրան զրպարտելու ու վատաբանելու մի օր չէր անցկացնի, շան ատամ ուներ* (ՀԼԴԲ, 457):

Распускать/распустить горло/глотку - Հայիոյել: *-А ты что за барыня! Да ты не хайли! Что горло-то распустил* (РАФРС, 143).

Перемывать/перемыть косточки - Բամբասել մեկին: *Сперва Тося решила, что они говорят о ней, перемывают ей косточки, и Илья, посмеиваясь, рассказывает Анфисе, какая Тося дуреха* (РАФРС, 288).

Чесать/точить зубы - Բամբասել: *А я-то дурак, с тобой зубы чешу* (БИР, 294).

Намять/помять/наломать - Խիստ հայիոյել մեկին: - *Если ты завтра с такими же речами... выступишь, тебе намнут бока, и поверь мне, за дело* (РАФРС, 45).

Злой (на) язык - Մեկի կամ մի բանի մասին չարութեամբ, ծաղրանքով խոսելիւթ: *К тому же, его обыкновенная угрюмость, крутой нрав и злой язык имели сильное влияние на молодые наши умы* (ПАД, 189).

Злые языки - Չար, զրպարտող բամբասող մարդիկ: *Враги то мои, злые-то языки эти все что заговорят, когда без шинели пойдешь* (ДФБ, 72).

Чесать языки - Բամբասել, շաղակրատել մեկի մասին: *А такое дело, что бабы языками чесать не станут* (ՓСРЯ, 526).

A bitter tongue - Սուր, չար լեզու: *That Mrs Brown had a very bitter tongue was known to everyone.*

Wag one's tongue - Շատ խոսել, բամբասել: *You'll have plenty of chance to wag your long tongue, my bonnie woman* (САН, 30).

Tongues wag - Շատ խոսել, բամբասել: (ERPRD, 770)

Gossiping and lying go hand in hand (ասացվ.) - Բամբասանքն ու սուտը գնում են ձեռք-ձեռքի տված:

Надувать в уши - Բամբասել, ականջը լցնել: *Я не хочу, чтобы у нас был кто-нибудь, кроме меня и моей жены, чтобы ей надували в уши, что обыкновенно надувают в уши г-жи родственницы* (ՓСРЯ, 262).

Попадать на язык/язычок - Խոսակցությունների առարկա դառնալ: - *Вы опасный человек,- сказала она мне,- я бы лучше желала папастыся в леуу под нож убийцы, чем вам на язычок* (ЛМГ, 93).

Բամբասանք, չարախոսություն, շաղակրատանք արտահայտող դարձվածքների շարքում տեղ են գտել նաև մի շարք այլ դարձվածքներ՝ **բերանից գեշ** (բրբ. – հայիոյանք տվող), **օձի/իժի լեզու ունենալ** (չարախոս լինել), **լեզուն քրրել** (բամբասել, շաղակրատել) **մատի փաթաթան** (բամբասանքի առարկա), **բերանից կեղտ թափել** (հայիոյել, չարաչար բամբասել), **բերանի ծամոն/ծամոց/մաստակ** (բամբասանքի առարկա), **трепать языком** (չատախոս լինել, անդադար խոսել), **висеть на ухе** (մեկին տրամադրել մյուսի դեմ), **язык без костей** (մեկը շաղակրատ է), **shoot off one's mouth** (բերանը եկածն ասել), **have a big mouth** (չարախոս լինել) և այլն:

Դիտարկելով «բամբասանք, չարախոսություն, շաղակրատանք» իմաստներն արտահայտող դարձվածքների իմաստային դաշտը հայերենում, ռուսերենում և անգլերենում, նկատում ենք, որ բացի իրենց ընդհանուր իմաստից,

հիշյալ դարձվածքներն արտահայտում են մի շարք այլ իմաստային նրբերանգներ: Այսպես, օրինակ՝ **չարության** և **շատախոսության** նրբիմաստներն առկա են դիտարկվող երեք լեզուներում, **ծաղրանքի**, **գրպարտության**, **հայհոյանքի**, **սանձարձակ խոսքի** նրբիմաստները հանդիպում են հայերենում և ռուսերենում, իսկ **ստի** նրբիմաստը առկա է միայն անգլերենում: Նկատված մյուս՝ **քննադատության**, **վարկաբեկման**, **չկամության** և **հիմարություններ ասելու**, **անպատիվ անելու** նրբերանգները հանդիպում են միայն հայերենում:

Դարձվածքների գլխավոր անդամը իմաստային առումով մարմնի մասի անվանումն է, որը չի կարող օտարվել: Շարահյուսության տեսակետից միավորների գլխավոր անդամը կախված է դարձվածքի կառուցվածքային տիպից: Ուսումնասիրված դարձվածքները պատկանում են կառուցվածքային տարբեր տիպերի: Բոլոր լեզուներում գերակշռում են երկանդամ, եռանդամ և քառանդամ (հայերենում) բայական միավորներ, երկանդամ գոյականական և ածականական դարձվածքներ, ինչպես նաև մեկ-երկու հաղորդակցական դարձվածք: Դարձվածքների բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերություններն արտահայտվում են ըստ դիտարկվող լեզուների տիպաբանական առանձնահատկությունների՝ հայերենում՝ հոլովական վերջավորություններով, իսկ ռուսերենում և անգլերենում՝ նախդիրներով:

Ուսումնասիրված դարձվածային միավորներում գործում են քերականական տարբեր կարգեր՝ անվանական՝ առկայացման, հոլովի, թվի և բայական՝ դեմքի, թվի, եղանակի, ժամանակի, սեռի: Դարձվածքների մեծ մասում նշված կարգերն ունեն իմաստազատիչ դեր, այսինքն դրանք այլ ձևով գործածելիս դարձվածքը կկորցնի իր դարձվածային իմաստը: Որոշ կարգեր օժտված չեն նման դերով:

Հայերենի և ռուսերենի դարձվածքների շարքում հանդիպում են դարձվածքային տարբերակներ, օրինակ՝ **բերանից դուրս տալ/թափվել/վեր ածել/վեր թափվել** (բառային), **բերանի ծամով/ծամոց դառնալ**, **լինել** (բառային), **լեզվի կապերը արձակել/բաց թողնել** (բառային), **распускать/распустить горло/глотку** (բառային, բայական), **намять/наломать/обломать бока** (բառային), **чесать/точить зубы** (բառային) և այլն:

Դիտարկված դաշտի դարձվածքները լայն առումով հոմանիշներ են, սակայն, ըստ նրբիմաստների նկատվում են մի քանի ավելի նեղ հոմանիշային շարքեր: Բերենք մի քանիսը:

✓ **միսը ծամել – միսը կրծել**, **ատամի տակ ընկնել – մատի փաթաթան դառնալ/լինել – բերանն ընկնել – բերանի ծամոն դառնալ – ականջը լցնել – անունը բերանում մի մատ մեղր դառնալ; ոտքը բռնել – ոտը կրծել – լեզվից**

թույն կաթել – ծուռ բերան բանալ – չար լեզու – օձի լեզու ունենալ; գլխին կեղտաջուր լցնել – իժի լեզու ունենալ – չար լեզուներ – ճակատին մուր քսել; բերանը շաղ/ցրիվ տալ – լեզուն մաքուր չպահել – բերնի կապը կտրել – լեզուն շաղ տալ; *распускать/распустить глотку* – *намять бока*; *перемы-вать косточки* – *чесать зубы* – *надувать уши* – *попадать на язык*; *злой на язык* – *злые языки*; *tongues wag* – *wag one's tongue* և այլն:

Ուսումնասիրված դարձվածքների շարքում չեն հանդիպում հականիշ դարձվածքներ: Սակայն որոշ առումով հականիշ կարող են համարվել հայերենի այն դարձվածքները, որոնք արտահայտում են իրենց խոսքով կամ վարք ու բարքով բամբասանքի առարկա դառնալու և ընդհանրապես ոչ մի բանով բամբասանքի և չարախոսության արժանի չլինելու իմաստները: Սա, կարծում ենք, պայմանավորված է դարձվածքների բայական բաղադրիչների սեռիմաստային առանձնահատկություններով:

Ոճական առումով դարձվածքները հիմնականում պատկանում են ժողովրդախոսակցական ոճին: Հայերենի որոշ դարձվածքներ օգտագործվում են բարբառներում՝ **ատամները քորել, ոտքը բռնել, բերանից գեշ, լեզվատեղ լինել, գլուխը տափը դնել**, իսկ **բերանից կեղտ թափել** և **չան ատամ ունենալ** դարձվածքներն ունեն գոեհկաբանական գործածություն:

Նկատելի է նաև, որ ուսումնասիրված դարձվածքներով բավականին հարուստ է գեղարվեստական գրականությունը:

Դիտարկված դարձվածքները հիմնականում ունեն ազգային բնույթ, հատուկ են տվյալ լեզվով խոսող ժողովրդի լեզվամտածողությանը՝ **միսը կրծել, ոտքը բռնել, մատի փաթաթան դառնալ, բերանը պատռել, գլխին կեղտաջուր լցնել, բերանի ծամոն դարձնել, բերանը ցրիվ տալ, լեզուն շաղ տալ** և այլն, սակայն հանդիպում են նաև այնպիսիք, որ ունեն իրենց համարժեքները ուսումնասիրվող մյուս մեկ կամ երկու լեզվում.

✓ **անոսկոր լեզու** – *язык без костей*; **ատամի տակ ընկնել, բերանը ընկնել** – *попадать на язык* – *set tongues wagging*; **լեզուն թափ տալ** – *трепать языком* – *wag one's tongue*; **չար լեզու** – *злой (на) язык* – *a bitter tongue*; **չար լեզուներ** – *злые языки*; **բամբասանքն ու սուտը գնում են ձեռք ձեռքի** – *сплетня и ложь идут рука об руку* – *gossiping and lie go hand in hand* և այլն:

Որոշ դեպքերում համարժեք դարձվածքները պատճենումներ են, սակայն, կարծում ենք, որ տարբեր ժողովուրդներ կարող էին նույն վատ երևույթը նույն կերպ (թեկուզ այլ միավորներով) արտահայտել:

Այսպիսով, ուսումնասիրելով հայերենի, ռուսերենի և անգլերենի «բամբասանք, չարախոսություն, զաղակրատանք» արտահայտող դարձվածքների իմաս-

տային, կառուցվածքային, քերականական, ոճական առանձնահատկությունները՝ նկատում ենք, որ վերջիններս ունեն նմանություններ և տարբերություններ: Համարժեք դարձվածքների և նույնիսկ համարժեք իմաստային դաշտերի գոյությունը վկայում է այդ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների մասին, ինչն էլ իր հերթին բացահայտում է լեզվամտածողության մեջ եղած մշակութային ընդհանրությունները, մյուս կողմից՝ չնայած ուսումնասիրված դարձվածքների շարքում հանդիպող բազմաթիվ համարժեքների, ուսումնասիրված դարձվածքների ճնշող մեծամասնությունը հատուկ է միայն այս կամ այն լեզվին, մի հանգամանք, որ վկայում է հիշյալ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ազգային յուրահատկությունների մասին: Տարբերությունները պայմանավորված են մի կողմից՝ մարմնի մասերի անվանումները օգտագործելու տարբեր սովորությամբ, լեզվական միավորների իմաստային ծավալի տարբերություններով, հոմանշային տարբերություններով, մյուս կողմից՝ արտալեզվական գործոններով: Ինչպես նշում է Ս. Գ. Տեր-Մինասովան. «Իրականության միևնույն հատվածը տարբեր լեզվական ձևավորում է ստանում տարբեր լեզուներում, քանի որ իրականության այդ հատվածն անցնում է մարդու գիտակցության միջով և արտացոլման ընթացքում ձեռք է բերում այնպիսի յուրահատուկ գծեր, որոնք հատուկ են տվյալ ազգային գիտակցությանը, որն իր հերթին պայմանավորված է տվյալ ժողովրդի մշակույթով» [22]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՍՀ, հ. 2, Ե., 1976:
2. **Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, 354 էջ:
3. **Չարյան Ն.**, Հացավան, Ե., 1947:
4. **Սուքիասյան Ա., Գալստյան Ա.**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևանի համալս. հրատ., 1975:
5. **Դեմիրճյան Դ.**, Վարդանանք, Երևան, 1987:
6. **Պողոջյան Պ.**, Հացի խնդիր, Երևան, Հայաստան հրատ., 1968:
7. **Դեմիրճյան Դ.**, Պատմվածքներ, Ե., «Լույս», 1986:
8. **Օտյան Ե.**, Երկերի ժողովածու, Ե., 1935:
9. **Շիրվանզադե Ա.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Երևան, Պետ հրատ., 1930:
10. **Նար - Դոս**, Պատմվածքներ, վիպակներ, Երևան, «Լույս» հրատ., 1978:
11. **Բակունց Ա.**, Երկեր, «Սովետ. գրող» հրատ., 1986:
12. **Թորգոմյան Ծ.**, Անմար կրակներ, Ե., 1959:
13. **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1990-1996:
14. **Квеселевич Д.И.** Русско-английский фразеологический словарь. М., 1998.

15. Бунин И.А. Рассказы. М., 1983.
16. Пушкин А.С. Драматические произведения, проза. М., 1982.
17. Достоевский Ф.М. Бедные люди. Униженные и оскорблённые. М., 1974.
18. Молотков А.И. Фразеологический словарь русского языка / (около 4000 фр.). М.: Русский язык, 1978.
19. Лермонтов М. Ю. Герой нашего времени. Стихи-поэмы. Ер.: Луйс, 1984.
20. Cronin A.J. Hatter's Castle, "FL. Publ. House". М., 1963.
21. Кунин А.В. Англо-русский фразеологический словарь. М.: Совет. Энциклопедия, 1982.
22. Тер-Минасова С.Г. Язык и межкультурная коммуникация. М.: Слово, 2000, 262 с.

А.З. КАЗАРЯН

ФРАЗЕОЛОГИЗМЫ, ВЫРАЖАЮЩИЕ СПЛЕТНЮ, ЗЛОЯЗЫЧИЕ, И ПУСТОСЛОВИЕ В АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

Рассматриваются и сопоставляются фразеологизмы, выражающие сплетню, злоязычие, пустословие в армянском, русском и английском языках. Выявлены общности и различия семантических, структурных, грамматических и стилистических особенностей фразеологизмов данных языков, что, в свою очередь, способствует выявлению общностей и различий языкового мышления народов-носителей рассматриваемых языков.

Ключевые слова: фразеологизм, значение, особенность, общность, различие, языковое мышление, синоним, антоним, эквивалент.

H.Z. GHAZARYAN

ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH PHRASEOLOGICAL UNITS EXPRESSING GOSSIP, SLANDER, VERBIAGE

The semantic, structural, grammatical, stylistic peculiarities of Armenian, Russian and English phraseological units, expressing gossip, slander, verbiage are considered and contrasted. The similarities and differences, of the peculiarities of the considered units are investigated. This, in its turn, helps reveal the similarities and differences in the linguistic thinking of the peoples speaking the considered languages.

Keywords: phraseological unit, meaning, peculiarity, universality, difference, linguistic thinking, synonym, antonym, equivalent.